ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 10 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հ/կ եւ քաղաքացի Ռաշիդ Մելիքսեթյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հ/կ եւ քաղաքացի Ռաշիդ Մելիքսեթյանը 2012թ. սեպտեմբերի 19-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի դրույթները:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողները պահպանել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,

- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,

- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմողներն սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դատական կազմը գտնում է, որ հաշվի առնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ դիմումը «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հ/կ մասով ենթակա է ընդունման ամբողջությամբ, իսկ երկրորդ դիմողի՝ քաղաքացի Ռաշիդ Մելիքսեթյանի մասով՝ մասնակի, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը նրա նկատմամբ չի կիրառվել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հ/կ անհատական դիմումով գործը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ, ընդունել քննության:

Քաղաքացի Ռաշիդ Մելիքսեթյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի մասով:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

10 հոկտեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ /1-22